Շրջակա միջավայրի նախարար
պարոն Հ. Սիմիդյանին

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը.**
   Լիլիթ Աբրիամյան
2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   Ջրային քաղաքականության վարչության պետ
3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Շվեյցարիայի Ժնև քաղաք՝ 2023 թվականի 12-15 նոյեմբերի. աշխատաժողով Ժնևի Ազգերի պալատում
4. **Հրավիրող կողմը (առկայության դեպքում).**
   ՄԱԿ-ի ԵՏՀ՝ Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպական տնտեսական հանձնաժողով (UNECE):

1. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   Մասնակցություն՝ Ջրի և առողջության մասին արձանագրության ներքո կլիմայական կայունության բարձրացման ռազմավարական կլոր սեղանին:

2. **Քննարկված թեմաները (հարցերը).**
   Նիստերի ընթացքում քննարկված հիմնական թեմաներն էին՝
   1.Կլիմայի ազդեցությունները և ռիսկերը;
   2.Կառավարման կառույցները և շահագրգիռ կողմերի մասնակցությունը;
   3.Կլիմայական կայունությունը բարելավելուն ուղղված գործողությունների իրականացումը;
   4.Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի համար կլիմայական ֆինանսավորման տարբեր հասանելի աղբյուրների ապահովումը, դրա վերաբերյալ իրազեկվածության բարձրացումը;
   5. Ջրի և առողջության մասին Արձանագրության դերը և հետագա քայլերը;
   6. Թիրախների սահմանման Նպատակային խմբի աշխատանքային ծրագրի և 2023-2025 թթ. հաշվետվողականության քննարկում;
   7.Ռազմավարական կլոր սեղանի արդյունքների վերլուծություն՝ ուղղված ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտում կլիմայի փոփոխության նկատմամբ դիմադրողականության բարձրացմանը;

8. Քննարկում՝ սահմանված ռազմավարական առաջնահերթությունները ինչպես կարող են արտացոլվել Արձանագրության շրջանակներում նպատակային ցուցանիշները սահմանելիս;
9. Արձանագրության 6-րդ հոդվածի համաձայն՝ Արձանագրության Կողմ երկրների և այլ պետությունների կողմից իր նպատակային ցուցանիշների սահմանման, վերանայման և իրականացման աշխատանքների ընթացքում ձեռք բերված առաջընթացի ներկայացում;
10.Արձանագրության շրջանակներում հաշվետվությունների առցանց համակարգի մշակման ընթացքի քննարկում, որը պետք է մեկնարկվի 2024-2025 թվականներին՝ վեցերորդ հաշվետու շրջանի համար;
11.Ջրամատակարարման, ջրահեռացման և հիգիենայի ոլորտում Կայուն զարգացման նպատակներով սահմանված ցուցանիշներին հասնելուն ուղղված առաջընթացի ներկայացում; և այլն:

**3. Հանդիպումները, ելույթները.**

Նիստերին մասնակցում էին Ջրային կոնվենցիայից բխող Արձանագրության ինչպես կողմ հանդիսացող, այնպես էլ կողմ չհանդիսացող երկրների ներկայացուցիչները, ՄԱԿ ԵՏՀ անդամ պետությունների, ինչպես նաև միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների ներկայացուցիչները, ինչպիսիք են՝ Շրջակա միջավայրի եվրոպական գործակալությունը, Առողջապահական համաշխարհային կազմակերպությունը, ՄԱԿ-ի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպությունը (ՅՈՒՆԵՍԿՕ), ՄԱԿ-ի Եվրոպական Տնտեսական Հանձնաժողովը, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը, Առողջապահության համաշխարհային կազմակերպության շրջակա միջավայրի և առողջության եվրոպական կենտրոնը և այլն:

Աշխատաժողովին հանդես եմ եկել ելույթով «Հայաստանի Հանրապետության ջրային ոլորտում կլիմայի փոփոխության հարմարվողականության 2022-2026թթ գործողությունների ծրագրով նախատեսված առաջնահերթ միջոցառումները» թեմայով, որով սահիկաշարով ներկայացրել եմ ջրային ոլորտում կլիմայի փոփոխության հարմարվողականության գործողությունների հնգամյա ծրագիրը, դրա նպատակը, սկզբունքները, նպատակներին հասնելու համար առաջնահերթ իրականացվելիք միջոցառումները:

**4. Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Նիստերին ներկայացվեցին թեմատիկ ելույթներ, վերոնշյալ թեմաների վերաբերյալ տարբեր երկրների փորձերը, դրանց ուղղությամբ կատարված աշխատանքները, Ուզբեկստանի և Ղազախստանի ներկայացուցիչները ներկայացրեցին Արձանագրությանը անդամակցելու ուղղությամբ կատարված աշխատանքները և այդ գործընթացի ավարտին մոտենալու հանգամանքը: Կազմակերպվեցին ինտերակտիվ քննարկումներ՝ մասնակիցների առանձին խմբերի

համար: Եվս մեկ անգամ կոչ արվեց ոչ անդամ երկրներին վավերացնելու Ջրային կոնվենցիայից բխող Ջրի և առողջության մասին արձանագրությունը՝ կարևորելով կլիմայի փոփոխության հետևանքով առաջացած մարտահրավերներին միասնական համատեղ ուժերով դիմակայելու հանգամանքը:

5. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները:**

ՅՈՒՆԵՍԿՕ-ի և ՄԱԿ ԵՏՀ քարտուղարությունների կողմից կարևորվեց Ջրամատակարարման, ջրահեռացման և հիգիենայի ոլորտում Կայուն զարգացման նպատակներով սահմանված ցուցանիշներին հասնելուն ուղղված երկրների ջանքերը: Բարձր գնահատվեց Արձանագրության 6-րդ հոդվածի համաձայն՝ Արձանագրության և կողմ երկրների, և ոչ անդամ երկրների կողմից երկրի նպատակային ցուցանիշների սահմանման, վերանայման և իրականացման աշխատանքների իրականացումը:

Ամփոփվեցին նիստերի ընթացքում քննարկված թեմաները, կազմվեցին եզրակացություններ, որոշվեցին և ամրագրվեցին նոր հանդիպումների վայրերն ու ժամկետները:

*Գործուղվող* *Լիլիթ Աբրահամյան*

*20.11.2023թ.*